

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ԱՐԱՄ ՎԻԼԵՆԻ

ԼԻԶԻՆԳԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք՝ քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2025

РОССИЙСКО – АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ) УНИВЕРСИТЕТ

КАГРАМАНЯН АРАМ ВИЛЕНОВИЧ

ПРОБЛЕМЫ ГРАЖДАНСКО-ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ ЛИЗИНГА В РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.03 – “Частное право – гражданское, торговое (коммерческое); международное частное, семейное, трудовое право, право социального обеспечения”

ЕРЕВАН - 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում:

Գիտական ղեկավար՝

իրավաբանական գիտությունների
թեկնածու Մ. Ա. Խաչատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Ն. Վ. Կոզլովա
իրավաբանական գիտությունների
թեկնածու Կ. Մ. Հովհաննիսյան

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիա

Պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի հունիսի 07- ին՝ ժամը 12:00-ին, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփի Էմինի 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի գրադարանի գիտական աշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2025 թվականի մայիսի 6-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

իրավաբանական գիտությունների թեկնածու

Ջ. Հ. Հայրապետյան

Тема диссертации утверждена в Российско-Армянском (Славянском) Университете.

Научный руководитель:

кандидат юридических наук М. А. Хачатрян

Официальные оппоненты:

доктор юридических наук, профессор Н. В. Козлова

кандидат юридических наук К. М. Оганесян

Ведущая организация:

Академия государственного управления РА

Защита состоится 07 июня 2025г. в 12:00 на заседании специализированного совета 063 по Юриспруденции КВОН РА при Российско-Армянском (Славянском) университете (0051, г. Ереван, ул. О. Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников Государственного образовательного учреждения высшего профессионального образования «Российско-Армянский (Славянский) университет».

Автореферат разослан 6-го мая 2025г.

Ученый секретарь специализированного совета,

кандидат юридических наук

Дж. А. Айрапетян

ԱՏԵՆԱԽՈՍԽԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Խորհրդային Միության փլուզումից հետո նորանկախ Հայաստանի Հանրապետությունը թևակոխեց մի պատմական շրջափուլ, որում գերակա սկսեցին համարվել ազատ շուկայական տնտեսական հարաբերությունները: Սկզբունքորեն նոր տնտեսական համակարգն արմատապես փոխեց նաև քաղաքացիական շրջանառության և քաղաքացիական իրավահարաբերությունների ամբողջ տրամաբանությունն ու բովանդակությունը, և քաղաքացիական իրավունքի սուբյեկտներն աճող մրցակցությանը դիմագրավելու համար ակտիվորեն սկսեցին կիրառել արդյունավետ կառուցակարգեր: Դրանցից է լիզինգը, որը զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում վաղուց արդեն արդարացրել է իրեն, քանի որ ունակ է էական աշխուժություն մտցնել տնտեսության մեջ:

Տնտեսության տարբեր ոլորտներում աճի տեմպերն արագացնելու կարևոր նախապայմաններից է հիմնական արտադրական միջոցների առկայությունը, որոնք մեր երկրի տնտեսության մեջ հիմնականում ունեն մաշվածության բարձր աստիճան, հետևաբար նաև՝ ցածր օգտակար գործողության գործակից: Միևնույն ժամանակ, տնտեսական հարաբերությունների մասնակիցները հաճախ բավարար սեփական միջոցներ չեն ունենում նոր սարքավորումներ և գույք ձեռք բերելու կամ սարքավորումներն արդիականացնելու ու դրանց արտադրողականությունը բարձրացնելու համար, և հենց այստեղ է, որ լիզինգը քաղաքացիական շրջանառության մասնակիցների համար դառնում է արդյունավետ գործիք, որն ավանդական վարկավորման հետ մրցակցության մեջ դրսևորում է իր շոշափելի առավելությունները: Լիզինգն իրենից ներկայացնում է նաև ներդրումային միջավայրի զարգացման կարևոր գործոն, և պատահական չէ, որ լիզինգի զարգացումը գտնվում է պետության հատուկ աջակցության ներքո՝ ընդհուպ մինչև լիզինգային տոկոսադրույքների սուբսիդավորում: Լիզինգը մեծ հնարավորություններ ունի մեր երկրում գործարար միջավայրի բարելավման, գյուղատնտեսության զարգացման, քաղաքացիների սպառողական կարիքների բավարարման համար ֆինանսական միջոցներ ներգրավելու, առևտրային բանկերին և վարկային կազմակերպություններին եկամուտներ ապահովելու գործում: Այս առումով լիզինգի քաղաքացիաիրավական կարգավորման հիմնախնդիրների գիտական հետազոտության արդիականությունը պայմանավորված է մեր երկրի տնտեսության տարբեր ոլորտներում լիզինգի զարգացմամբ:

Լիզինգի զարգացումն անհնար է առանց արդյունավետ իրավական բազայի առկայության: Հայաստանի Հանրապետությունում լիզինգային հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման հիմքերը դրվել են 1998 թվականի մայիսի 5-ին ընդունված, 1999 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ՝ նաև Օրենսգիրք)՝ ներառվելով Օրենսգրքի 35-րդ գլխի «Ֆինանսական վարձակալություն (լիզինգ)» վերտառությամբ 6-րդ պարագրաֆում: Հայաստանի Հանրապետությունը 2001 թվականի օգոստոսի 30-ին միացել է 1998 թ. նոյեմբերի 25-ին Մոսկվայում ԱՊՀ երկրների միջև կնքված «Միջպետական լիզինգի մասին» կոնվենցիային, որի

1 Տե՛ս, օրինակ, ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 893-Լ, 26.03.2020թ. թիվ 355-Լ, 2022 թվականի հունվարի 27-ի N 105-Լ որոշումները:

համար հիմք է ընդունվել 1988թ. Օստավայում կնքված Միջազգային ֆինանսական լիզինգի մասին ՈւՆԻԴՐՈՒԱ կոնվենցիան: Մեր երկրում, ի տարբերություն շատ երկրների, լիզինգային իրավահարաբերությունները համալիր կարգավորող օրենսդրական առանձին ակտ չի ընդունվել (ՌԴ-ում, օրինակ, գործում է նաև «Ֆինանսական վարձակալության (լիզինգի) մասին» ֆեդերալ օրենքը): Լիզինգի զարգացման և լայն կիրառման նկատառումներից ելնելով² Օրենսգրքի 35-րդ գլխի 6-րդ պարագրաֆը «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-316-Ն օրենքով (ընդունվել է 2020 թվականի հունիսի 18-ին, ուժի մեջ է մտել 2020 թվականի հուլիսի 1-ից) շարադրվել է նոր խմբագրությամբ, ինչի արդյունքում լիզինգի ինստիտուտը կրել է էական փոփոխություններ: Աշխատանքում հանգամանալից քննարկվել են այդ փոփոխությունները: Լիզինգի կառուցակարգի շրջանակներում ծագող քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորումների վերլուծությունը ոչ միայն զուտ գիտական խնդիր է, այլև կոչված է բարելավելու լիզինգի նորմատիվ կարգավորման հիմքերը, նպաստելու իրավակիրառական պրակտիկայի ճիշտ զարգացմանը, մասնավոր դր ՀՀ-ում երկար ժամանակ ատենախոսության թեմայով իրավագիտական ոչ մի հետազոտություն չի իրականացվել, իսկ օրենսդրական փոփոխությունները հետազոտության առարկա դառնում են առաջին անգամ:

Լիզինգի պայմանագիրն ամենաբարդ քաղաքացիաիրավական պայմանագրերից է, լիզինգի ուսումնասիրությանը նվիրված իրավաբանական գրականությունում շարունակվում են տեսական վեճերը մի շարք առանցքային հարցերի առնչությամբ, որոնք վերաբերում են, մասնավորապես, լիզինգի պայմանագրի իրավական էությանը, քաղաքացիաիրավական պայմանագրերի համակարգում լիզինգի պայմանագրի զբաղեցրած տեղին, պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պատասխանատվության առանձնահատկություններին, լիզինգի տեսակներին, լիզինգի պայմանագրի էական պայմաններին, լիզինգի պայմանագրի փոխոխմանը, լուծմանը և այլն: Ատենախոսությունում փորձ է արվել նոր իրավամտաճողության տեսանկյունից վերլուծել ինչպես նշված վիճելի հարցերը, այնպես էլ հայրենական գործող օրենսդրությունից բխող յուրահատուկ հիմնախնդիրները:

Վերը շարադրվածը վկայում է ատենախոսության թեմայի և հետազոտության արդիականության մասին՝ ոչ միայն պրակտիկ, այլև քաղաքացիական իրավունքի գիտության տեսանկյունից:

Հետազոտության նպատակը և հիմնական խնդիրները: Հետազոտության նպատակը մեր երկրում լիզինգային քաղաքացիաիրավական հարաբերությունների համալիր հետազոտությունն է, լիզինգի քաղաքացիաիրավական կարգավորման տեսագործական հիմնախնդիրների բացահայտումը, դրանց լուծման և գործող օրենսդրության ու պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակումն ու ներկայացումը:

Նախանշված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

✓ Ուսումնասիրել լիզինգի ծագումը և իրավական կարգավորման պատմությունը Հայաստանում, ներկայացնել լիզինգի իրավական կարգավորման աղբյուրները մեր երկրում,

2 Տե՛ս <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=11351&Reading=0> հղումով:

✓ Ուսումնասիրել ու վերլուծել լիզինգատուի, լիզինգառուի և վաճառողի միջև առաջացող քաղաքացիաիրավական հարաբերությունների բարդ համակարգը, դրա տարրերն ու ձևավորվող իրավական կապերի բնույթը, առանձնահատկությունները, տարբերակել «լիզինգ» և «լիզինգի պայմանագիր» եզրույթները,

✓ Որոշել քաղաքացիաիրավական պայմանագրերի շարքում լիզինգի պայմանագրի ճիշտ տեղը,

✓ Բացահայտել լիզինգի պայմանագրի իրավական էությունը, ձևակերպել լիզինգի պայմանագրի հասկացության սահմանումը,

✓ Ուսումնասիրել լիզինգի տեսակները, բացահայտել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված լիզինգի տեսակների հիմնախնդիրները, նորմատիվ ամրագրման համար առաջարկել լիզինգի այնպիսի արդյունավետ տեսակներ, որոնք կարող են նպաստել մեր երկրում լիզինգային շրջանառության աճին,

✓ Վերլուծել լիզինգի պայմանագրի կնքման առանձնահատկությունները, լիզինգի պայմանագրի կնքման և կատարման գործընթացում ծագող իրավահարաբերությունները, լիզինգի պայմանագրի հիման վրա ծագող պարտավորական իրավահարաբերությունների բովանդակությունը, որոշել լիզինգի պայմանագրի բոլոր էական պայմանները, ցույց տալ լիզինգի պայմանագրում կողմերի պարտականությունները պատշաճորեն և բարեխղճորեն արտացոլելու անհրաժեշտությունը,

✓ Վեր հանել լիզինգային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության առանձնահատկությունները և արդի հիմնախնդիրները,

✓ Բացահայտել լիզինգի պայմանագիրը փոփոխելու և լուծելու առանձնահատկություններն ու արդի հիմնախնդիրները,

✓ Ձևակերպել լիզինգային օրենսդրության ու պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկություններ:

Հետազոտության թեմայի գիտական մշակվածության աստիճանը, տեսական և նորմատիվ հիմքերը: Հայրենական մասնագիտական գրականությունում լիզինգը համեմատաբար ավելի շատ լուսաբանվել է տնտեսագիտական առումով, իսկ լիզինգի պայմանագրին և լիզինգային պարտավորություններին վերաբերող տեսական իրավական հարցերը բավարար ուշադրության չեն արժանացել: Լիզինգի տնտեսագիտական հարցերն ուսումնասիրվել են Ա. Ս. Մխիթարյանի, Ա. Ռ. Մարտիրոսյանի և այլոց կողմից: Լիզինգի վերաբերյալ իրավագիտական հետազոտություն իրականացրել է Ս. Գ. Մեղրյանը «Լիզինգի քաղաքացիաիրավական կարգավորումը» (2000թ.) թեկնածուական ատենախոսության մեջ, լիզինգի առանձին հարցերին անդրադարձել են Գ. Հ. Ղարախանյանը, Տ. Կ. Բարսեղյանը, Ա. Մ. Հայկյանցը, Լ. Ն. Մեհրաբյանը, այլ իրավագետներ: Նշված աշխատանքները կատարվել են նախկին օրենսդրության հիման վրա:

Հետազոտության տեսական հիմք են հանդիսացել նաև լիզինգի վերաբերյալ արտասահմանյան ու հատկապես իրավունքի ռուսական դպրոցի գիտնականների աշխատությունները: Նշված տեսաբաններից են՝ Ե. Վ. Կաբատովան, Վ. Վ. Վիտրյանսկին, Ա. Ա. Իվանովը, Ի. Ա. Ռեշետնիկը, Ի. Վ. Սախարովան, Ի. Ե.

Կաբանովան, Լ. Յու. Վասիլևսկայան, Յու. Ս. Խարիտոնովան, Ա. Վ. Եգորովը, Ե. Վ. Ուզոլնիկովան, Մ. Դ. Սելեզնյովը, Վ. Ի. Չույկոն, Ի. Վ. Տորրես Օրտեգան, Ա. Ե. Պրուդնիկովան, Ս. Ա. Գրոմովը, Ի. Ա. Բեյլանան, Դ. Լևին, Ռ. Կոնտինոն և ուրիշներ:

Ուսումնասիրության համար արժեքավոր գիտական նյութ են ապահովել նաև Տ. Կ. Բարսեղյանի, Ա. Մ. Հայկյանցի, Ա. Ս. Ղամբարյանի, Վ. Դ. Ավետիսյանի, Ե. Ա. Սուխանովի, Մ. Ի. Բրազինսկու, Վ. Վ. Վիտրյանսկու, Ա. Գ. Կարապետովի, Գ. Ֆ. Շերշենևիչի, Օ. Ա. Կրասավչիկովի, Ա. Պ. Սերգենի, Յու. Կ. Տոլստոյի, Տ. Ե. Աբովայի, Ա. Յու. Կաբալկինայի, Բ. Ի. Պուգինսկու, Օ. Ա. Կուզնեցովայի, Յու. Վ. Ռոմանեցի, Ս. Վ. Սարբաշի, Լ. Տ. Կոկոնայի և այլոց՝ քաղաքացիական, գործարարական իրավունքի ոլորտներին վերաբերող տեսագործական աշխատանքներն ու հոդվածները:

Հետազոտության նորմատիվ հիմք են հանդիսացել լիզինգային իրավահարաբերությունները կարգավորող ներպետական և միջազգային նորմատիվ իրավական ակտերը, այլ երկրների օրենսդրական և այլ իրավական ակտերը:

Հետազոտության հիմք են հանդիսացել նաև լիզինգին առնչվող իրավակիրառական պրակտիկան Հայաստանի Հանրապետությունում և այլ երկրներում, այդ թվում՝ լիզինգի պայմանագրերը, դատական ու արբիտրաժային ակտերը: Հաշվի առնելով մեր երկրում լիզինգին առնչվող գործերով դատական ու արբիտրաժային պրակտիկայի զարգացման խիստ ցածր մակարդակը՝ դիտարկվել են հատկապես ՌԴ դատական ատյանների մոտեցումներն ու դիրքորոշումները:

Օգտագործվել են նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ տարբեր իրավական հարցերով ուղենշող իրավական դիրքորոշումները:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսությունը հայրենական իրավագիտությունում թեմային նվիրված ամբողջական գիտահետազոտական աշխատանք է, որն իրականացվել է նաև նոր օրենսդրության, ընթացիկ փոփոխությունների, տեսական գրականության ու պրակտիկայի ուսումնասիրության հիման վրա, ինչը թույլ է տվել վեր հանել լիզինգի քաղաքացիաիրավական կարգավորման արդի հիմնախնդիրները և առաջարկել դրանց լուծման տարբերակներ:

Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում և եզրակացության մեջ ամփոփված առաջարկություններում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

Կատարված հետազոտության արդյունքում պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Օրենսգրքի 628-րդ հոդվածով որդեգրված այն մոտեցումը, որ լիզինգը վարձակալության տեսակ է, արդարացված չէ: Լիզինգն իրենից ներկայացնում է բարդ իրավական կառուցակարգ, տարբեր քաղաքացիաիրավական կառուցակարգերի յուրատեսակ «համաձուլվածք»: Լիզինգային հարաբերությունները տարբերվում են ինչպես վարձակալության, այնպես էլ հարակից պայմանագրային այլ կառուցակարգերից (վարկ, տարածամկետ վճարմամբ առուվաճառք և այլն): Լիզինգային հարաբերությունների պարտադիր և ակտիվ մասնակից է լիզինգի պայմանագրի կողմ չհանդիսացող վաճառողը, ինչը նույնպես ընդգծում է լիզինգի պայմանագրի առանձնահատուկ բնույթը:

Լիզինգատուի և լիզինգառուի միջև երկկողմ գործարքի՝ լիզինգի պայմանագրի կնքումից հետո կողմերի իրավահարաբերություններին միանում է գույքի վաճառողը, և արդյունքում կնքվում է յուրահատուկ բազմակողմ գործարք լիզինգատուի, լիզինգառուի ու վաճառողի միջև, որն ուղղված է համատեղ ջանքերով լիզինգային սխեման գործարկելուն:

2. Ձևավորվող նյութական հարաբերությունների և լիզինգի բարդ կառուցակարգի իրավաբանական առանձնահատկությունները ռեալ նախադրյալ են հանդիսանում լիզինգի պայմանագիրը որպես պայմանագրի ինքնուրույն տեսակ (sui generis) առանձնացնելու համար: Անհրաժեշտ է դուրս բերել լիզինգի պայմանագիրը վարձակալության տեսակի իրավական ռեժիմից, իսկ լիզինգին վերաբերող դրույթներն Օրենսգրքում համախմբել ու կարգավորել առանձին գլխում՝ որպես ֆինանսական ծառայությունների ոլորտում կնքվող առանձին տիպի պայմանագիր:

3. Լիզինգի պայմանագիրն իր բնույթով գործարարական է և իրենից ներկայացնում է բանկերի ու վարկային կազմակերպությունների կողմից լիզինգային ֆինանսական գործառնությունների իրականացման պայմանագրային ձև: Լիզինգի պայմանագրի բովանդակության մեջ առանձնանում են գույքի ձեռքբերմանն ուղղված պայմանագրային պայմաններն ու գույքը ձեռք բերելուց և այն լիզինգառուին հանձնելուց հետո դրա տիրապետման ու օգտագործման հարցերը կարգավորող պայմանագրային դրույթները, այդ թվում՝ լիզինգային վճարներ մուծելու հետ կապված: Գույքը ձեռք բերելու պայմանների մասով լիզինգի պայմանագիրն ունի կազմակերպչական բնույթ և կոչված է հիմք կամ նախադրյալ ստեղծելու գույքի ձեռքբերման և լիզինգային հարաբերությունների ձևավորման համար: Լիզինգի պայմանագիրը միանշանակորեն որպես կոնսենսուալ պայմանագիր դիտարկելու տեսական մոտեցումը չի արտացոլում քննարկվող հարաբերությունների առանձնահատկությունները. պայմանագրի նյութական օբյեկտի ձեռքբերման մասով կողմերի իրավունքներն ու պարտավորությունները ծագում են փոխհամաձայնության պահից՝ կոնսենսուալ պայմանագրերի նման, մինչդեռ լիզինգային վճարների, գույքի տիրապետման ու օգտագործման մյուս հարցերի մասով կարևորվում է գույքի հանձնման փաստը, ինչը բնութագրական է ռեալ պայմանագրերին:

4. Ի մի բերելով լիզինգի պայմանագրի առանձնահատկությունները, կիրառելով սահմանման կանոնները՝ ներկայացվում է լիզինգի պայմանագրի հասկացության հետևյալ սահմանումը. «Լիզինգի պայմանագրով լիզինգատուն պարտավորվում է լիզինգառուին հատկացնել ֆինանսավորում՝ լիզինգառուի նշած կամ իր ընտրած գույքն այլ անձի հետ կնքվող պայմանագրով ձեռք բերելու և լիզինգային վճարի դիմաց լիզինգառուի ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանը հանձնելու միջոցով»:

5. Լիզինգառուի համար լիզինգի պայմանագրի կիրառման ընդհանրական իմաստը կայանում է նրանում, որ նա կարողանում է ստանալ իրեն անհրաժեշտ գույքը կամ սարքավորումը ձեռնտու ֆինանսավորման պայմաններով, սակայն անհրաժեշտ գույքը ոչ միշտ է պատրաստի վիճակում առկա լինում շուկայում: Բացի այդ, լիզինգառուի համար կարող է ավելի հարմար լինել, որ լիզինգի պայմանագրի առարկա գույքը պատրաստվի կամ ստեղծվի հենց իր նախասիրություններին համապատասխան ու իր ցանկացած չափորոշիչներով: Լիզինգի պոտենցիալը լիարժեքորեն իրացնելու, լիզինգային շրջանառության աճը խթանելու համար նպատակահարմար է լիզինգատուի կողմից գույքը ձեռք բերելու

իրավական հնարավորությունը չսահմանափակել բացառապես առուվաճառքի (մատակարարման) պայմանագրով, ինչպես որ նախատեսված է Օրենսգրքով, այլև հնարավորություն ստեղծել լիզինգի առարկան ձեռք բերելու կապալի պայմանագրի կիրառման միջոցով:

6. Լիզինգի պայմանագրի կնքման պահի դրությամբ գործնականում հաճախ խնդրահարույց է լինում նկարագրել գույքն իր բոլոր անհատականացնող տվյալներով: Եթե վարձակալության պայմանագրի պարագայում պայմանագիրը կնքելիս գույքը գտնվում է վարձատուի մոտ, ապա լիզինգի դեպքում գույքն սկզբում չի գտնվում լիզինգատուի մոտ. վերջինս պարտավորվում է նախ ձեռք բերել գույքը, որից հետո միայն այն հանձնել լիզինգատուի տիրապետմանն ու օգտագործմանը: Ըստ այդմ, առաջարկվում է գույքի ամբողջական անհատականացման պահանջը չհամարել լիզինգի պայմանագրի էական պայման և լիզինգի պայմանագրի կնքման օֆերտան ուղարկելու պահի դրությամբ բավարար համարել այնպիսի տվյալների նախատեսումը, որոնք անհրաժեշտ ու բավարար են առուվաճառքի պայմանագրի առարկայի վերաբերյալ պայմանը համաձայնեցնելու համար: Առաջարկվում է նորմատիվ մակարդակում որպես լիզինգի պայմանագրի էական պայմաններ ամրագրել լիզինգի պայմանագրի ժամկետի ու գնի վերաբերյալ դրույթները:

7. Հայրենական լիզինգային պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ լիզինգի հայտի, լիզինգի պայմանագրի նախագծի բովանդակությունը գործնականում մշակվում է լիզինգային ընկերությունների կողմից, ինչից օգտվելով՝ լիզինգատուները հաճախ լիզինգի պայմանագրերում ներառում են առավելապես իրենց շահերն արտացոլող դրույթներ՝ նույնիսկ ի հաշիվ լիզինգատուների շահերի: Արդյունքում, հատկապես փոքր ու միջին ձեռնարկատեր լիզինգատուները, գայթակղվելով լիզինգի տոկոսադրույթների վճարման հարցում պետական օժանդակության հնարավորությամբ, հաճախ լիզինգային պարտավորությունների մեջ մտնում են ամբողջապես անբարենպաստ պայմանագրային հնարավորություններով:

Ըստ այդմ, հաշվի առնելով լիզինգային հարաբերությունների զարգացման նպատակը և հատկապես փոքր ու միջին ձեռնարկատերերի, սպառողների համար լիզինգից օգտվելու առավելագույնս նպաստավոր պայմաններ ստեղծելու անհրաժեշտությունը, ինչպես նաև բացառելու համար կվճերը՝ կապված լիզինգի պայմանագիրը միանալու պայմանագիր համարելու կամ չհամարելու հետ, ճիշտ կլինի նորմատիվ մակարդակում նախատեսել, որ լիզինգատուն իրավունք ունի պահանջել փոփոխելու կամ լուծելու պայմանագիրը, եթե պայմանագիրը մշակվել է լիզինգատուի կողմից ստանդարտ ձևով ու զրկում է լիզինգատուին նման տեսակի պայմանագրերով սովորաբար տրամադրվող իրավունքներից, բացառում կամ սահմանափակում է լիզինգատուի պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար կամ պարունակում է լիզինգատուի համար այլ ակնհայտ ծանր պայմաններ, որոնք նա չէր ընդունի, եթե հնարավորություն ունենար մասնակցել լիզինգի պայմանագրի պայմանների որոշմանը:

8. Լիզինգի պայմանագրի առարկայի նկատմամբ լիզինգատուի իրավունքների վերլուծությունից հետևում է, որ մի շարք հատկանիշներով լիզինգատուի իրավագործությունները դուրս են գալիս գույքի տիրապետման և օգտագործման պայմանագրով պարտավորական իրավունք ունեցողի «ստանդարտ» իրավագործությունների սահմաններից ու բնութագրական են առավելապես իրային իրավունքի կրողների համար: Մասնավորապես, լիզինգի առարկայի տեխնիկական

սպասարկումն իրականացնելու և պահպանությունն ապահովելու, գույքի հիմնական ու ընթացիկ վերանորոգումը կատարելու պարտականությունները, ըստ Օրենսգրքի 684.4-րդ հոդվածի, կրում է լիզինգառուն, մինչդեռ, ըստ նույն օրենսգրքի 164-րդ հոդվածի ընդհանուր կանոնի, գույքի պահպանման հոգսը կրում է դրա սեփականատերը (տվյալ դեպքում լիզինգատուն): Բացի այդ, լիզինգատուն գույքը ձեռք է բերում հատուկ նպատակով՝ հանձնել այն լիզինգառուի օգտագործմանն ու դրանից ստանալ օգուտներ, իսկ պայմանագրի գործողության ընթացքում գրեթե չի առնչվում լիզինգի առարկայի հետ. պատահական չէ, որ որոշ դեպքերում լիզինգառուն դիտարկվում է որպես լիզինգի առարկայի տնտեսական սեփականատեր, իսկ լիզինգատուն՝ իրավական սեփականատեր: Ընդ որում, եթե հատկապես լիզինգի պայմանագիրը նախատեսում է լիզինգի առարկան պայմանագրի ավարտին լիզինգառուի սեփականությանն անցնելու վերաբերյալ դրույթ, ապա լիզինգառուն մինչև գույքն իրեն ի սեփականություն անցնելը, այսինքն՝ մինչև իր կողմից լիզինգի առարկայի գնման արժեքի ամբողջական փոխհատուցումը, ունենում է իրավաչափ իրավաչափ (լեգիտիմ) ակնկալիք կամ սպասելիք՝ հիմնված լիզինգի պայմանագրի համապատասխան պայմանի վրա:

Ըստ այդմ առաջարկվում է նախատեսել կարգավորում, որ, եթե լիզինգի պայմանագիրը պարունակում է լիզինգի առարկան լիզինգառուի սեփականությանն անցնելու վերաբերյալ պայման, ապա գույքը լիզինգառուին հանձնելուց հետո լիզինգատուն գույքը կարող է տնօրինել միայն լիզինգառուի համաձայնության դեպքում՝ այդ կարգը չպահպանելու համար նախատեսելով գույքի տնօրինման գործարքն անվավեր ճանաչելու վերաբերյալ դրույթ: Արդյունքում, լիզինգառուն պայմանագրի ավարտին կստանա այլ անձանց իրավունքներով անհարկի չճանրաբեռնված գույք: Նախատեսել, որ լիզինգատուն մինչև լիզինգի պայմանագրի ստորագրումը պարտավոր է լիզինգառուին նախագգուշացնել լիզինգի առարկայի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին, ինչպես նաև լիզինգառուին գրավոր ձևով հայտնել լիզինգի գործողության ընթացքում նման իրավունքների ծագման և բոլոր փոփոխությունների մասին:

9. Օրենսգրքի 684.3-րդ հոդվածը չի արտացոլում լիզինգային վճարների կազմավորման տրամաբանությունը, թերի է: Հաշվի չի առնվել, որ, ի տարբերություն վարձավճարի, լիզինգային վճարը լոկ գույքը տիրապետման ու օգտագործման հանձնելու դիմաց ստացվող հատուցում չէ, այլ նաև կոչված է փոխհատուցելու լիզինգատուի կատարած ծախսերը, ինչպես նաև ծառայելու որպես վարձատրություն՝ լիզինգատուի կատարած ներդրման կամ լիզինգառուին ֆինանսավորելու դիմաց: Ուստի առաջարկվում է լիզինգային վճարները սահմանել որպես լիզինգի պայմանագրով սահմանված գումար, որը ներառում է լիզինգի առարկան ձեռք բերելու ու այն լիզինգառուին հանձնելու հետ կապված լիզինգատուի ծախսերի հատուցումը, մինչև լիզինգի առարկան լիզինգառուին հանձնելը և պայմանագրի գործողության ընթացքում լիզինգատուի կողմից լիզինգառուին մատուցվող ծառայությունների հետ կապված ծախսերի հատուցումը, ինչպես նաև լիզինգատուի շահույթը՝ լիզինգառուին ֆինանսավորելու դիմաց (տոկոսագումարները): Եթե լիզինգի պայմանագիրը նախատեսում է լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքի անցում լիզինգառուին, ապա լիզինգային վճարները կարող են ներառել նաև լիզինգի առարկայի գնման գնի համապատասխան մասերը:

10. Լիզինգառու-վաճառող ուղիղ հարաբերություններում լիզինգառուին գնորդի իրավունքներով ու պարտականություններով օժտելը (Օրենսգրքի 678-րդ

հողվածի 1-ին մաս) իրենից ներկայացնում է նորմ-ֆիկցիա, որի կիրառման միջոցով լիզինգառուն պայմանականորեն համարվում կամ ընկալվում է իբրև գույքի առուվաճառքի պայմանագրի նոմինալ գնորդ: Առաջարկվում է նախատեսել, որ վաճառողը պարտականություններ ու պատասխանատվություն է կրում լիզինգառուի առջև՝ այնպես, ինչպես կլինեն, եթե վերջինս լիներ առուվաճառքի պայմանագրի կողմ, իսկ գույքը մատակարարվեր անմիջականորեն լիզինգառուին:

11. Օրենսգրքի 684.5-րդ հոդվածում առկա անորոշությունը և Օրենսգրքի 466-րդ հոդվածին ոչ համահունչ եզրաբանության առկայությունը հնարավորություն չեն տալիս պարզորոշ եզրակացնել՝ օրենսդիրը լիզինգի պայմանագրի լուծման դատական, թե՛ ոչ դատական ընթացակարգ է նախատեսել: Անհրաժեշտ է Օրենսգրքի 684.5-րդ հոդվածից վերացնել Օրենսգրքի ընդհանուր դրույթներից չբխող և գիտական հիմնավորում չունեցող «պայմանագրի միակողմանի լուծում» ձևակերպումը և հստակ ամրագրել լիզինգատուի ու լիզինգառուի՝ խախտված պայմանագրից միակողմանի հրաժարվելու իրավունքը, որպիսի պարագայում պայմանագիրը լուծված կհամարվի ոչ դատական կարգով:

Նախատեսել լիզինգի պայմանագրից միակողմանի հրաժարվելու ընթացակարգը՝ սահմանելով, որ պայմանագրից հրաժարվելու իրավունքը կողմերից յուրաքանչյուրը կարող է իրացնել մյուս կողմին պայմանագրից հրաժարվելու վերաբերյալ ծանուցելով, որի դեպքում լիզինգի պայմանագիրը դադարում է ծանուցումն ստանալու պահից, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

12. Օրենսգրքի 684.5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ձևակերպված (որոշ թերություններով հանդերձ) լիզինգի պայմանագրի լուծման կոնկրետ հիմքերը (խախտումները) բացահայտում են «պայմանագրի էական խախտում» ընդհանուր հասկացությունը լիզինգի պայմանագրի նկատմամբ և «նորմ-կանխավարկաձևեր» են. խախտումներն ենթադրվում են էական, քանի դեռ հակառակը չի ապացուցվել: Իրենց դերը կատարելու, պայմանագրային կարգապահությունը ապահովելու և կողմերի իրավունքների պաշտպանությանը չխոչընդոտելու համար պայմանագրի լուծման հիմք հանդիսացող խախտումներն Օրենսգրքում, ինչպես նաև լիզինգի պայմանագրերում պետք է ձևակերպվեն բավականաչափ հստակ և ունենան բավականաչափ լուրջ ու ակնհայտ բնույթ:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Աշխատանքն ունի տեսագործնական նշանակություն և կարող է պիտանի լինել լիզինգի ինստիտուտի մասին տեսական գիտելիքների խորացման ու զարգացման, հետագա իրավագիտական հետազոտությունների, ուսումնական դասընթացների, ինչպես նաև նորմատիվ կարգավորման ու իրավակիրառական պրակտիկայի բարելավման համար, ինչը վերջնարդյունքում կնպաստի լիզինգային գործունեության զարգացմանը մեր երկրում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի Իրավունքի ինստիտուտի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնում: Հեղինակը մասնակցել է լիզինգի պրակտիկային նվիրված մասնագիտական դասընթացների, որպես այցելու մասնակցել է Leasing expo ցուցահանդեսների, ինչպես նաև համապատասխան քննարկումներ է ունեցել բանկերի և լիզինգային ընկերությունների, «Հայաստանի լիզինգատուների ասոցիացիա» հասարակական կազմակերպության ներկայացուցիչների և այլոց հետ: Աշխատանքում շոշափված հիմնախնդիրները, առաջարկություններն ու

գաղափարներն արտացոլվել են հեղինակի՝ տարբեր ամսագրերում տպագրված գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, որոնք ներառում են ինը պարագրաֆ, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված իրավական ակտերի, գրականության և այլ աղբյուրների ցանկից:

Ներածությունում հիմնավորվել է հետազոտվող թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, սահմանվել են հետազոտության նպատակներն ու խնդիրները, օբյեկտը և առարկան, մեթոդոլոգիական հիմքերը, ներկայացվել է թեմայի գիտական մշակվածության աստիճանը, շարադրվել ու հիմնավորվել են պաշտպանության դրվող հիմնական դրույթները, ցույց է տրվել աշխատանքի գիտագործնական նշանակությունը, տեղեկություններ են բերվել հետազոտության արդյունքների և փորձարկման մասին:

Առաջին գլուխը՝ «Լիզինգի քաղաքացիաիրավական հարաբերությունների ընդհանուր բնութագիրը» վերտառությամբ, բաղկացած է հինգ պարագրաֆից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ «Լիզինգի ծագումը և իրավական կարգավորման պատմությունը Հայաստանում» վերտառությամբ, համառոտ անդրադարձ է կատարվել լիզինգի՝ որպես տնտեսական կառուցակարգի ծագման ու զարգացման պատմական ընթացքին, ինչպես նաև շարադրվել է մեր երկրում լիզինգային հարաբերությունների սկզբնավորման և քաղաքացիաիրավական կարգավորման պատմությունը: Ներկայացվել է լիզինգի նորմատիվ իրավական բազան մեր երկրում:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Լիզինգային հարաբերությունների առանձնահատկությունները և համակարգը» վերտառությամբ, ուսումնասիրվել են լիզինգային հարաբերությունների համակարգային կառուցվածքը, դրա տարրերը, լիզինգային հարաբերությունների տարբերակիչ առանձնահատկությունները, վաճառող-լիզինգառու հարաբերությունների բնույթը, առանձնացվել ու քննարկվել են շոշափվող հարցերի վերաբերյալ տեսաբանների հիմնական մոտեցումները, ինչի արդյունքում ներկայացվել են հեղինակի գիտական հայեցակետերը, որոնք հիմք են ընդունվել հետազոտության հետագա պարագրաֆները շարադրելիս:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ «Լիզինգի պայմանագրի տեղը քաղաքացիաիրավական պարտավորությունների համակարգում» վերտառությամբ, հետազոտվել է քաղաքացիաիրավական պայմանագրերի համակարգում լիզինգի պայմանագրի տեղի հիմնախնդիրը: Ներկայացվել են վիճելի հարցի հետ կապված մասնագիտական գրականությունում առկա հիմնական մոտեցումները, տարբեր երկրների իրավական համակարգերում կարգավորման փորձը: Հեղինակի կողմից որպես ուղենիշ է ընդունվել քաղաքացիաիրավական պայմանագրերի կառուցման կամ հիմքը, որը բացահայտում է պայմանագրային հարաբերությունների մեջ մտնելիս կողմերի իրական նպատակները: Վերլուծության արդյունքում հիմնավորվել է, որ իր էության մեջ լիզինգի պայմանագիրը յուրահատուկ կամ ինքնուրույն բնույթի (sui generis) պայմանագրային կառուցակարգ է, ուստի և լիզինգին վերաբերող դրույթներն Օրենսգրքում առաջարկվել է տեղաբաշխել և կարգավորել առանձին գլխում՝ որպես ֆինանսավորման ոլորտում կնքվող ինքնուրույն տիպի պայմանագիր:

Առաջին գլխի չորրորդ պարագրաֆում՝ «Լիզինգի պայմանագրի հասկացությունը և հատկանիշները» վերտառությամբ, ներկայացվել են լիզինգի պայմանագրի ձեռնարկատիրական բնույթը, կազմակերպչական պայմանագրերին

բնորոշ հատկանիշները: Քննարկվել է նաև լիզինգի պայմանագրի բնույթը՝ կոնսենսուալ ու ռեալ պայմանագրերի դասակարգման լույսի ներքո, ինչպես նաև բացահայտվել է լիզինգի պայմանագրով լիզինգատուի և լիզինգառուի միջև փոխհամաձայնության կամ կոնսենսուսի բովանդակությունը: Ուշադրության է արժանացել շրջափվող խնդիրներին վերաբերող լիզինգի պայմանագրային հարաբերությունների հայրենական պրակտիկան:

Վերոնշյալի հիման վրա ի մի բերելով լիզինգի պայմանագրի առանձնահատկությունները, կիրառելով նաև սահմանման գիտական կանոնները՝ հեղինակը տվել է լիզինգի պայմանագրի հասկացության համարժեք սահմանում:

Առաջին գլխի հինգերորդ պարագրաֆում՝ «Լիզինգի տեսակների հիմնախնդիրները» վերտառությամբ, ուսումնասիրվել են մեր օրենսդրությամբ նախատեսված լիզինգի տեսակները, բացահայտվել են դրանց իրավական կարգավորման թերություններն ու բացերը, առաջարկվել են համապատասխան լուծումներ: Առանձին քննարկման առարկա են դարձվել սպառողական նպատակներով կնքվող լիզինգի պայմանագրի, ինչպես նաև լիզինգի պայմանագրի առարկայի գնման պայման նախատեսող լիզինգի պայմանագրի իրավակարգավորման խնդիրները: Առաջարկվել ու հիմնավորվել է «կապալային» լիզինգի ներդրման անհրաժեշտությունը՝ որպես պայմանագրային հարաբերությունների լավագույնս կազմակերպման միջոց, ինչպես նաև լիզինգային շրջանառության աճի խթան:

Երկրորդ գլխի՝ «Լիզինգային իրավահարաբերությունների ծագումը, բովանդակությունը և դադարումը» վերտառությամբ, բաղկացած է չորս պարագրաֆից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Լիզինգի պայմանագրի կնքման առանձնահատկությունները» վերտառությամբ, հանգամանորեն նկարագրվել է լիզինգային իրավահարաբերությունների ծագման և լիզինգի պայմանագրի կնքման գործընթացը՝ իր փուլերով, ինչպես նաև ներկայացվել է լիզինգի պայմանագրի բովանդակությունը: Հատուկ վերլուծության է ենթարկվել լիզինգի պայմանագրի էական պայմանների հիմնախնդիրը, հիմնավորվել են տեսագործական բնույթի առաջարկություններ:

Պարագրաֆի շրջանակում ուշադրության է արժանացել ու քննարկվել լիզինգի պայմանագրերում հաճախ նկատվող «անարդար» կամ անբարեխիղճ պայմաններից լիզինգառուի իրավական պաշտպանության միջոցների հիմնախնդիրը, առաջարկվել են լուծումներ:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Լիզինգատուի, լիզինգառուի և վաճառողի իրավահարաբերությունները» վերտառությամբ, ներկայացվել է լիզինգի պայմանագրային հարաբերությունների հիման վրա առաջացող պարտավորությունների կատարումը՝ դրա շրջանակում վերլուծելով լիզինգատուի, լիզինգառուի և վաճառողի իրավունքների ու պարտականությունների յուրահատկությունները: Ըստ որում, լիզինգատուի, լիզինգառուի և վաճառողի իրավունքներն ու պարտականությունները քննարկվել են՝ կախված լիզինգային հարաբերությունների զարգացման փուլից՝ լիզինգի առարկայի ձեռքբերման ընթացքում, լիզինգի առարկան հանձնելու ընթացքում և լիզինգի առարկան լիզինգառուին հանձնելուց հետո՝ պայմանագրի գործողության ընթացքում ունեցած իրավունքներ ու պարտականություններ: Մանրամասնորեն վերլուծության են ենթարկվել վաճառողից լիզինգի առարկան ձեռքբերելու, գույքը լիզինգով տրամադրելու նպատակի վերաբերյալ վաճառողին ծանուցելու, լիզինգի առարկան

իզիներգառուին հանձնելու, իզիներգի առարկան պատշաճ օգտագործելու ու պահպանելու, վերանորոգելու, իզիներգի առարկայի օգտագործման նկատմամբ հսկողություն իրականացնելու, իզիներգի առարկան ենթաիզիներգով տրամադրելու, իզիներգային վճարները մուծելու հետ կապված կողմերի իրավունքներն ու պարտականությունները, հիմնավորվել են իրավակարգավորումների թերությունները, սխալներն ու բացերը, կատարվել են կոնկրետ առաջարկություններ:

Հատուկ վերլուծության է ենթարկվել իզիներգի առարկայի նկատմամբ իզիներգառուի իրավունքների բնույթը՝ իրային ու պարտավորական իրավունքների դասակարգման լույսի ներքո:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Պատասխանատվությունը իզիներգային պարտավորությունների խախտման համար» վերտառությամբ, ներկայացվել ու վերլուծության են ենթարկվել իզիներգառուի, իզիներգառուի ու վաճառողի միջև առաջացող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում պատասխանատվության առանձնահատկությունները: Մասնավորապես, քննության են առնվել իզիներգի առարկայի ձեռքբերմանն ուղղված պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, վաճառողին գույքը իզիներգով հանձնելու նպատակի վերաբերյալ չձանուցելու, իզիներգի առարկան հանձնելու պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, իզիներգի առարկան պատշաճ պահպանելու, պայմանագրի պայմաններին ու իզիներգի առարկայի նշանակությամբ համապատասխան օգտագործելու պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, իզիներգային վճարները մուծելու պարտականությունը չկատարելու դեպքերում վրա հասնող քաղաքացիաիրավական պատասխանատվության հիմնախնդիրները, համապարտ պատասխանատվության կիրառման առանձնահատկությունները: Արվել են առաջարկություններ, որոնք կարող են նպաստել իզիներգային պարտավորությունների խախտման համար պատասխանատվության հարցերն օրենսդրի կողմից պատշաճ մակարդակով կարգավորելուն:

Երկրորդ գլխի չորրորդ պարագրաֆում՝ «Լիզիներգի պայմանագրի փոփոխման և լուծման հիմնախնդիրները» վերտառությամբ, ուսումնասիրվել են ինչպես իզիներգի պայմանագրի, այնպես էլ իզիներգի առարկայի առուվաճառքի պայմանագրի փոփոխման և լուծման յուրահատկությունները: Խնդրո առարկա հարցերը դիտարկվել են փոխադարձ համաձայնությամբ պայմանագիրը փոփոխելու և լուծելու, կողմի թույլ տված էական խախտման, հանգամանքների էական փոփոխության կապակցությամբ պայմանագիրը փոփոխելու և լուծելու, ինչպես նաև պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքերում պայմանագրային պարտավորությունների դադարման տարբերությունների լույսի ներքո՝ պրոյեկտելով դրանք իզիներգային հարաբերությունների վրա:

Ատենախոսության եզրակացությունում ամփոփվում են կատարված հետազոտության հիմնական արդյունքները, որոնք ներկայացվում են ստորև.

✓ Լիզիներգային հարաբերություններն ունեն բարդ կառուցվածք, որը չի սահմանափակվում միայն իզիներգառու-իզիներգառու երկկողմ հարաբերություններով, այլև ներառում է վաճառող-իզիներգառու և վաճառող-իզիներգառու կապերը, ինչը իզիներգային հարաբերություններին հաղորդում է եռակողմ բնույթ: Լիզիներգային հարաբերությունների ձևավորումն ու զարգացումն ընթանում է իզիներգի պայմանագիր (երկկողմ գործարք) - իզիներգի առարկայի

առավաճառքի պայմանագիր - լիզինգային բազմակողմ (եռակողմ) գործարք տրամաբանական հաջորդականությամբ: Ամբողջապես կազմավորված լիզինգային հարաբերություններն ընդգրկում են ինչպես լիզինգատուի ու լիզինգառուի միջև լիզինգի պայմանագրից բխող երկկողմ հարաբերությունները, այնպես էլ լիզինգառուի, լիզինգատուի ու վաճառողի միջև լիզինգային գործարքից ծագող եռակողմ հարաբերությունները: Հետևում է, որ լիզինգային հարաբերությունների կարգավորումը չի կարող կառուցվել սովորական երկկողմ գործարքի ձևաչափով՝ դիտարկելով այն զուտ որպես լիզինգատուի ու լիզինգառուի միջև առաջացող հարաբերությունների համակարգ, նման մոտեցումը չի արտացոլում իրերի դրույթունը:

✓ Լիզինգային հարաբերությունների նպատակը ֆինանսավորումն է, իսկ որպես միջոց կամ իրավական ձև, կիրառվում է լիզինգի պայմանագիրը: Լիզինգի պայմանագիրը տվյալ գործընթացում ծառայում է որպես գույքի ձեռքբերման նպատակով լիզինգատուի ներդրած դրամական միջոցներն ապրանքի տեսքով լիզինգառուին փոխանցելու իրավապայմանագրային ձև, իսկ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը լիզինգատուին անհրաժեշտ է ընդամենը որպես տրամադրված ֆինանսավորումը վերադարձնելու պարտավորության ապահովման միջոց: Կարևորվել է «լիզինգ», «լիզինգի պայմանագիր» իրավաբանական տերմինների ճիշտ կիրառումը: Լիզինգի պայմանագիրը չպետք է շփոթել լիզինգի հետ, որը իրավահարաբերությունների բարդ համակցություն է՝ ներառյալ լիզինգի պայմանագրի առարկան ձեռք բերելու հետ կապված:

✓ Հայրենական լիզինգային պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ լիզինգառուի կողմից լիզինգային վճարների մուծումը սկսվում է լիզինգի առարկան փաստացի ստանալուց հետո, երբ հստակ է լինում, թե վերջնական ինչ գումար է ծախսվել լիզինգի առարկան լիզինգառուին հասցնելու համար (ներառյալ մաքսազերծման վճարները, միջնորդներին վճարվող գումարները և այլն) կամ այլ կերպ՝ լիզինգատուի կողմից լիզինգառուին ֆինանսավորելու կոնկրետ չափը: Լիզինգատուի ու լիզինգառուի համար լիզինգային իրավահարաբերությունների փաստացի ամբողջ ծավալով գործարկումը կապվում է լիզինգի պայմանագրի առարկան լիզինգառուին հանձնելու փաստի հետ, այլ ոչ թե սկսվում է լիզինգի պայմանագիրը լիզինգատուի և լիզինգառուի կողմից ստորագրվելու պահից: Ըստ այդմ, հեղինակը եզրակացնում է, որ լիզինգային իրավահարաբերությունների պարագայում պարտավորությունների մի խումբը (լիզինգի պայմանագրի առարկայի ձեռքբերման գործընթացի կազմակերպմանն ուղղված) ունի կոնսենսուալ բնույթ և ծագում է լիզինգատուի ու լիզինգառուի միջև փոխհամաձայնության կայանալու պահից, իսկ մյուս մասը (գույքի տիրապետման ու օգտագործման, պահպանության, լիզինգային վճարների վճարման և այլ հարցերի հետ կապված) գործողության մեջ է դրվում գույքը լիզինգառուին հանձնելուց հետո:

✓ Լիզինգի արդյունավետ տեսակների օգտագործումը կարևոր է լիզինգային ոլորտում քաղաքացիական շրջանառությունն աշխուժացնելու գործում, հետևաբար Օրենսգրքում լիզինգի առանձին տեսակների ներդրումն անհրաժեշտություն էր: Մինևույն ժամանակ, օրենսդրական փոփոխությունների արդյունքում որպես լիզինգի տարատեսակներ նախատեսված երկրորդային լիզինգը և հետադարձ լիզինգը պատշաճ իրավական մակարդակով չեն կարգավորվել, որպիսի բացը լրացնելու համար աշխատանքում կատարվել են համապատասխան առաջարկություններ: Սպառողական նպատակներով կնքվող լիզինգից բխող հարաբերությունները կարիք ունեն միասնական կարգավորման:

✓ Լիզինգի պայմանագրի էական պայմանների հարցն ունի կարևոր նշանակություն ինչպես պայմանագրի կնքված լինելը պարզելու, այնպես էլ տվյալ պայմանագրի էությունը բնութագրելու առումով: Լիզինգի պայմանագրի կնքման պահին գույքի ամբողջական անհատականացման պահանջը, որը բխում է Օրենսգրքի 684-րդ հոդվածի 1-ին մասի նորմից, հեղինակի կարծիքով, նպատակահարմար չէ դիտարկել որպես լիզինգի պայմանագրի էական պայման: Ըստ այդմ, էականը տվյալ դեպքում այն է, որպեսզի հավաստվի որոշակի հատկանիշներով ու տվյալներով կոնկրետ գույքը լիզինգառուին հանձնելու հանգամանքը՝ լիզինգի պայմանագրի հետագա լրացումներով, փոփոխություններով կամ գույքի հանձնման-ընդունման ակտով, իսկ օֆերտան ուղարկելու պահի դրությամբ բավարար կարելի է համարել գույքի վերաբերյալ ընդհանուր նվազագույն տվյալները, որոնք անհրաժեշտ ու բավարար են առավաճառքի պայմանագրի առարկայի վերաբերյալ պայմանը համաձայնեցնելու համար: Մինչույն ժամանակ, նորմատիվ մակարդակում որպես լիզինգի պայմանագրի էական պայմաններ հարկ է նախատեսել ժամկետի ու գնի վերաբերյալ պայմանագրային դրույթները, ինչը բխում է քննարկվող հարաբերությունների բնույթից:

✓ Ինչպես լիզինգի հայտի, այնպես էլ լիզինգի պայմանագրի նախագծի բովանդակությունը գործնականում մշակվում է լիզինգային ընկերությունների կողմից: Պայմանագրի կնքման գործընթացում լիզինգային ընկերության ու հաճախորդի կամ լիզինգառուի ունեցած բանակցային դիրքերն անհավասար են, որպիսի պայմաններում լիզինգային ընկերության կողմից լիզինգի պայմանագրում առավելապես իր շահերը՝ նույնիսկ ի հաշիվ լիզինգառուների շահերի, արտացոլող դրույթներ ներառելու ռիսկը բարձր է: Լիզինգային ծառայություններ մատուցող ընկերությունների թիվը մեր երկրում սահմանափակ է, իսկ լիզինգային ընկերությունների հաճախորդների մեջ գերակշիռ թիվ են կազմում փոքր ու միջին ձեռնարկատերերը, որոնց ֆինանսատնտեսական, կազմակերպչական հնարավորություններն անհամեմատ նվազ են լիզինգային ընկերությունների հնարավորություններից, ինչը նույնպես հաճախ օգտագործվում է լիզինգային ընկերությունների կողմից՝ ոչ պատշաճ մրցակցության պայմաններում իրենց հնարավորություններն ու իրավունքները չարաշահելու համար: Նպատակահարմար է, որ ՀՀ կառավարությունը մշակի և ընդունի լիզինգի օրինակելի պայմանագրեր՝ տնտեսության առանձին ճյուղերում դրանց կնքման առանձնահատկությունները հաշվի առնելով: Ներկայացվել են պայմանագրի անբարեխիղճ կամ «անարդար» պայմաններից պաշտպանվելու վերաբերյալ առաջարկություններ:

✓ Հեղինակը գտնում է, որ անհրաժեշտ է մանրամասն իրավական կարգավորման ենթարկել ու կարևոր իրավական նշանակություն տալ լիզինգի առարկայի պահպանության և օգտագործման նկատմամբ հսկողություն և ստուգում իրականացնելու հարցերին: Նկատի ունենալով, որ լիզինգի պայմանագրի գործողության ընթացքում լիզինգառուն ունի լիզինգային վճարներ մուծելու պարտականություն, նպատակահարմար է ամրագրել նաև լիզինգատուի կողմից լիզինգառուի գործունեության նկատմամբ ֆինանսական հսկողություն իրականացնելու իրավական հնարավորությունը՝ այնքանով, որքանով դա առնչվում է լիզինգատուի հանդեպ լիզինգառուի ունեցած դրամական պարտավորությունների կատարմանը:

✓ Գույքը լիզինգառուի տիրապետմանն ու օգտագործմանը հանձնելուց հետո դրա նկատմամբ լիզինգատուի սեփականության իրավունքի պահպանումը կրում է

ձևական բնույթ և ըստ էության լիզինգատուի համար ծառայում է որպես իր նկատմամբ լիզինգատուի ունեցած դրամական պարտավորությունների կատարումն ապահովող միջոց: Ինչ վերաբերում է գույքը լիզինգատուին հանձնելուց հետո դրա նկատմամբ լիզինգատուի ունեցած իրավունքներին, ապա, հեղինակի կարծիքով, դրանք իրենց էությամբ «մաքուր» պարտավորական իրավունքներ չեն և կրում են նաև իրային իրավունքի տարրեր. խոսքը վերաբերում է հատկապես լիզինգի առարկայի գնման իրավունքով ֆինանսական լիզինգին, որի դեպքում լիզինգային վճարներն ամբողջապես մարելու պարագայում գույքն անցնում է լիզինգատուին՝ ի սեփականություն: Ուսումնասիրված բոլոր դեպքերում ՀՀ լիզինգային ընկերությունների կողմից առաջարկվող լիզինգի պայմանագրերը հիմնականում ունեցել են այդպիսի պայման: Նման դեպքերում լիզինգատուն ունենում է նաև գույքը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիք: Անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել, որ լիզինգատուն իր՝ որպես գույքի իրավական սեփականատիրոջ իրավագործություններն իրացնելիս ու լիզինգի առարկան տնօրինելիս պետք է ստանա լիզինգատուի համաձայնությունը:

✓ Անհրաժեշտ է հստակեցնել գույքը ձեռք բերելու հարցում լիզինգատուի պարտականության բովանդակությունը, ինչը թույլ կտա ճիշտ որոշել նաև նշված պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության պայմանները: Ներկա կարգավորման պարագայում լիզինգատուն, լինելով բանկ կամ վարկային կազմակերպություն և իրականացնելով ֆինանսական (ձեռնարկատիրական) գործունեություն, ըստ էության պատասխանատու է գույքի ձեռք բերման պարտականությունը չկատարելու համար անգամ այն դեպքում, երբ վաճառողը, դիցուք, հրաժարվում է վաճառել իրեն պատկանող գույքը, ինչը հետևում է Օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումից: Նման սխալ ու չհավասարակշռված մոտեցումից խուսափելու համար անհրաժեշտ է ամրագրել, որ լիզինգատուն պատասխանատու է գույքը սեփականության իրավունքով ձեռք բերելու նպատակով առավաճառքի պայմանագրի կնքման օֆերտա ուղարկելու պարտականության կատարման համար, իսկ այն դիսկը, որը կապված է վաճառողի կամահայտնության կամ գույքի առավաճառքի (մատակարարման) պայմանագիրն այլ պատճառներով չկնքվելու հետ, տրամաբանորեն պիտի դրվի այն կողմի վրա, որն ընտրել է գույքի վաճառողին:

✓ Հաշվի առնելով լիզինգատուի համար գույքը ձեռք բերելիս այդ մասին վաճառողին գրավոր ծանուցելու լիզինգատուի պարտականության կարևորությունը՝ անհրաժեշտ է համարվել նախատեսել, որ եթե լիզինգատուն չի կատարում հիշյալ պարտականությունը, ապա ինքն է լիզինգատուի առջև պատասխանատվություն կրում առավաճառքի պայմանագրից բխող պահանջները վաճառողի կողմից չկատարվելու համար, եթե չի ապացուցում, որ վաճառողը գիտեր կամ պարտավոր էր իմանալ գույքը լիզինգատուին լիզինգով հանձնելու նպատակի մասին:

✓ Քանի որ վաճառողը լիզինգատուի հանդեպ կրում է ուղիղ պարտականություններ ու պատասխանատվություն, ուստի լիզինգատուի առջև վաճառողի պարտականությունների կատարումն ու պատասխանատվություն կրելու մասին կանոնները կիրառելիս իրավական դիսկրեթը նվազեցնելու համար հարկ է նախատեսել դիսպոզիտիվ ընդհանուր կանոն առ այն, որ լիզինգի պայմանագրի առարկան վաճառողի կողմից հանձնվում է անմիջականորեն լիզինգատուին: Հեղինակի համոզմամբ՝ վաճառողի ու լիզինգատուի միջև գոյություն ունեցող իրավահարաբերություններում լիզինգատուին գնորդի իրավունքներով օժտելն

իրենից ներկայացնում է իրավական ֆիկցիա, որի կիրառման միջոցով լիզինգառուն պայմանականորեն համարվում է իբրև գույքի իրավական գնորդ և օժտվում գնորդին բնորոշ իրավունքներով ու պարտականություններով:

✓ Ընդհանուր առմամբ, ինչպես լիզինգային պարտավորությունները, այնպես էլ լիզինգային պարտավորությունների խախտման համար պատասխանատվության հարցերն օրենսդիրը կարգավորել է չափազանց սակավաթիվ նորմերով՝ ըստ էության ապավինելով վարձակալության ընդհանուր դրույթներում նախատեսված սուբսիդիար կարգավորումներին, մինչդեռ նման մոտեցումը կիրառելի չէ լիզինգային յուրահատուկ հարաբերությունների դեպքում և չի ծածկում կարգավորման բացերը:

✓ Պայմանագրի լուծման արդյունքում շահավետ վիճակում հայտնվելու նպատակով լիզինգատուի՝ լիզինգի պայմանագրի լուծման իրավունքի չարաշահումը կանխելու հարցը կարևոր է: Լիզինգառուն պետք է համոզված լինի, որ լիզինգատուն չի խախտի իր իրավունքները: Հայրենական պրակտիկայում լիզինգի պայմանագրերն ըստ էության նախատեսում են պայմանագիրը կատարելուց միակողմանի հրաժարվելու ընթացակարգ լիզինգի պայմանագրի պայմանների գրեթե ցանկացած՝ անգամ չնչին խախտման դեպքում՝ լիզինգի պայմանագրի առարկա գույքի վերադարձմամբ: Ատենախոսի կարծիքով՝ պայմանագրի լուծման համար անհրաժեշտ է սահմանել ավելի խիստ հիմքեր, ինչպես նաև անհրաժեշտ է համարվել համադրել պայմանագրի կնքման պահի դրությամբ լիզինգատուի ակնկալիքները (ֆինանսավորման դիմաց սպասվելիք լիզինգային վճարների տեսքով) պայմանագրի լուծման արդյունքում լիզինգատուի փաստացի ստացածի հետ՝ ներառյալ լուծման պահի դրությամբ լիզինգի առարկայի արժեքը: Թերևս ճիշտ կլիներ նախքան պայմանագրի լուծում նախաձեռնելը լիզինգատուի համար սահմանել պարտականություն՝ խախտման մասին գրավոր տեղեկացնել լիզինգառուին և խախտումը վերացնելու համար նրան տրամադրել ողջամիտ ժամկետ:

✓ Առանձին դեպքերում անհրաժեշտ է լիզինգառուներին հնարավորություն տալ միակողմանիորեն պահանջել լիզինգային վճարների չափի նվազեցում (պայմանագրի փոփոխում) կամ պայմանագրի լուծում՝ այն դեպքերում, երբ որոշակի օբյեկտիվ հանգամանքների հետևանքով լիզինգառուն հայտնվում է այնպիսի վիճակում, որ լիզինգային վճարների նույն չափով վճարումը կհանգեցնի ֆինանսական փլուզման: Դա կարևոր է հատկապես փոքր ու միջին ձեռնարկատեր լիզինգառուների և լիզինգային ընկերությունների միջև պայմանագրային շահերի հավասարակշռությունն ապահովելու առումով:

✓ Հեղինակի համոզմամբ՝ ատենախոսությունում շարադրված առաջարկությունները կարող են լրիվությամբ կենսագործվել լիզինգային հարաբերությունները կարգավորող համապարփակ օրենսդրական ակտի շրջանակներում, որպիսին կարող է լինել լիզինգի մասին առանձին օրենքը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Արամ Ղահրամանյան, «Լիզինգառուի կողմից լիզինգի առարկայի գնման իրավունքով պայմանագրի առանձնահատկությունները», Պետություն և իրավունք, Երևան, 2017, թիվ 4 (78), էջեր 86-94:
2. Արամ Ղահրամանյան, «Ապառողական լիզինգի իրավական կարգավորման առանձնահատկությունները ՀՀ-ում», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան, 2018, թիվ 1 (1), էջեր 162-176:
3. Արամ Ղահրամանյան, «Լիզինգատուի պատասխանատվության հիմնախնդիրները ՀՀ-ում», Դատական իշխանություն, N1-2/223-224, 2018, Հունվար-Փետրվար: Երևան, էջեր 52-61:
4. Արամ Ղահրամանյան, «Լիզինգի պայմանագրի հասկացությունը և իրավական բնույթն ըստ ՀՀ օրենսդրության», «Այլընտրանք» գիտական հանդես, Երևան, 2018, #1 (հունվար-մարտ), էջեր 171-179:
5. Արամ Ղահրամանյան, «Լիզինգի պայմանագրի էական պայմանները», Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր (հասարակական գիտություններ) 2/2022, Ստեփանակերտ, 2022թ., էջեր 238-257:
6. Արամ Ղահրամանյան, «Լիզինգի պայմանագրի տեղը քաղաքացիաիրավական պարտավորությունների համակարգում», Հանրային կառավարում գիտական հանդես, 1/2023, Երևան, 2023թ., էջեր 142-154:
7. Nairi Sargsyan, Aram Ghahramanyan, "Contemporary issues related to leasing and the types of leasing under the Civil Code of RA", ALTERNATIVE Quarterly Academic Journal, Economy & Management April - June, Yerevan, 2023, p. 68-81.
8. Каграманян А. В. О некоторых проблемах, связанных с изменением и прекращением лизинговых обязательств// Вестник Российско-Армянского университета (серия: гуманитарные и общественные науки). 2025г. № 1/2025. Ереван, с. 65-78.

КАГРАМЯН АРАМ ВИЛЕНОВИЧ
ПРОБЛЕМЫ ГРАЖДАНСКО-ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ ЛИЗИНГА В
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
РЕЗЮМЕ

Диссертация посвящена гражданско-правовому институту лизинга в Республике Армения. Лизинг – эффективный механизм, посредством применения которого участники хозяйственных отношений, не имеющих достаточных средств, получают возможность приобрести новое оборудование, средства и начать свою предпринимательскую деятельность, увеличить производственные мощности. Лизинг представляет собой также важный инвестиционный инструмент, применение которого способно дать толчок развитию инвестиционной среды. Не случайно, что лизинг находится под особой поддержкой государства, вплоть до субсидирования лизинговых процентов.

Развитие лизинга, безусловно, требует наличия надлежащей правовой базы. Основы гражданско-правового регулирования лизинга в Республике Армения были заложены в гражданском кодексе Республики Армения, принятом 5 мая 1998 года, и вступившим в силу с 1 января 1999 года. Нормы, регулирующие эти отношения, были включены в 6-ой параграф (статьи 677-684) под наименованием «Финансовая аренда» (лизинг) 35-ой главы под наименованием «Аренда». В результате принятия Закона N 316-N «О внесении изменений в гражданский кодекс Республики Армения» от 18 июня 2020г. 6-ой параграф главы 35-ой гражданского кодекса Республики Армения был изложен в новой (ныне действующей) редакции, вследствие чего в правовой институт лизинга были внесены существенные изменения, которые, однако, не решили все проблемы. Отечественная юридическая литература, посвященная лизингу, не богата, правоприменительная практика не едина, судебная практика почти отсутствует. Актуальность данного исследования особенно состоит в том, что работа выполнена на основе комплексного и целостного изучения лизинговых правоотношений, с учетом новых законодательных положений.

Основой диссертационного исследования послужили труды отечественных, зарубежных авторов и, в особенности, авторов русской правовой школы, отечественное законодательство, другие правовые акты, а также международно-правовые акты, законодательная и правоприменительная практика других стран.

Основная цель данной работы заключается в проведении комплексного исследования лизинговых правоотношений, в выявлении теоретических и практических проблем, а также в разработке и представлении предложений, направленных на разрешение проблем и дальнейшее совершенствование лизингового законодательства, лизинговой правоприменительной практики в Республике Армения.

В рамках диссертации были рассмотрены основные проблемы касательно, в частности, правовой сущности договора лизинга, места договора лизинга в системе гражданско-правовых договоров, характера правоотношений между продавцом и лизингополучателем, видов лизинга, существенных условий договора лизинга, особенностей ответственности при исполнении, неисполнении (ненадлежащего исполнения) договорных обязательств, заключения и расторжения договора лизинга. Представлена история возникновения и развития лизинга.

На основании научного анализа автор в системе лизинговых отношений выделил двусторонние отношения между лизингодателем и лизингополучателем, возникающие на основании договора лизинга, а также трехсторонние отношения между лизингодателем, лизингополучателем и продавцом. В результате анализа обязанностей лизингодателя автор обосновал организационную сущность договора лизинга, раскрыл содержание соглашения между лизингодателем и лизингополучателем, а также сформулировал научное определение договора лизинга.

Всесторонне проанализировав лизинговые правоотношения, автор пришел к заключению, что договор лизинга является своеобразным договорным видом (*sui generis*) в системе финансирования, а также обосновал необходимость его отдельного регулирования вне режима вида аренды.

В исследовании представлен также ряд предложений по вопросам заключения, изменения и расторжения договора лизинга, выполнения договорных обязательств и ответственности. Одним из нововведений диссертации является предложение о применении договора подряда в процессе приобретения предмета лизинга, что может способствовать развитию лизингового оборота в нашей стране.

Научная новизна диссертации отражена в положениях, выносимых на защиту, а также в теоретических обобщениях и предложениях, сделанных в заключении.

Работа имеет теоретическое и практическое значение и может быть полезной для углубления и расширения теоретических знаний о правовом институте лизинга, последующих юридических исследований, а также нормативного регулирования и улучшения правоприменительной практики, что в конечном итоге будет способствовать дальнейшему развитию лизинговой деятельности в нашей стране.

**THE PROBLEMS OF CIVIL LAW REGULATION OF LEASING
IN THE REPUBLIC OF ARMENIA**

SUMMARY

The thesis is devoted to the civil-law institute of leasing in the Republic of Armenia. Leasing is an effective mechanism that enables participants in economic relations who lack sufficient funds to acquire new equipment and resources, launch entrepreneurial activities, and expand their production capacities. It also constitutes an important investment instrument capable of stimulating the development of the investment environment. It is no coincidence that leasing enjoys special state support, including the subsidization of leasing interest rates.

The development of leasing definitely requires an appropriate legal framework. The foundations of civil law regulation of leasing in the Republic of Armenia were laid down in the Civil Code of the Republic of Armenia, adopted on May 5, 1998, and entered into force on January 1, 1999. The provisions regulating these relations were incorporated into Section 6 (Articles 677–684) under the name “Financial Lease (Leasing)” of Chapter 35 entitled “Lease.” Following the adoption of the Law N 316-N “On making amendments to the Civil Code of the Republic of Armenia” dated 18 June 2020, Section 6 of Chapter 35 of the Civil Code of the Republic of Armenia was revised in a new (currently effective) edition. As a result, significant changes were introduced to the legal institute of leasing; however, not all problems have been resolved. Domestic legal literature on leasing remains limited, the law enforcement (application) practice is inconsistent, and judicial practice is almost nonexistent. The relevance of the present study is especially underscored by the fact that it is based on a comprehensive and holistic examination of leasing legal relations in light of the new legislative provisions.

The dissertation research is founded on the works of both domestic and foreign scholars, particularly those of the Russian legal school, on Armenian legislation and other legal acts, as well as on international legal instruments and the legislation and law enforcement practices of other countries.

The principal objective of this dissertation is to conduct a comprehensive study of leasing legal relations, identify theoretical and practical issues, and develop and present proposals aimed at resolving the problems and further improvement of leasing legislation and leasing law enforcement practice in the Republic of Armenia.

Within the thesis central issues have been examined, specifically regarding the legal nature of the leasing agreement, the place of such an agreement in the system of civil-law contracts, the nature of the legal relations between the seller and the lessee, the types of leasing, the essential terms of the leasing agreement, as well as the particulars of liability in the fulfillment or non-fulfillment (improper fulfillment) of contractual obligations and the conclusion or termination of a leasing contract. The thesis also presents the history of emergence and development of leasing.

Based on the research analysis, the author distinguishes between the bilateral relationship arising between the lessor and the lessee under the leasing agreement and the trilateral relationship among the lessor, the lessee, and the seller, all within the broader system of leasing relations. By analyzing the lessor's obligations, the author substantiates the organizational nature of the leasing agreement, reveals the content of the agreement between the lessor and the lessee, and formulates a scholarly definition of the leasing agreement.

A comprehensive analysis of leasing legal relations leads the author to conclude that the leasing contract constitutes a unique contract type (*sui generis*) within the system of financing, and the author further justifies the need for its separate regulation, beyond the scope of a simple type of lease.

The study also presents a number of proposals concerning the conclusion, amendment and termination of the leasing contract, as well as the fulfillment of contractual obligations and contractual liability. One of the dissertation's innovations is the proposal to apply a contract for work in the process of acquiring the leasing subject, which may promote the development of the turnover in the leasing sector in our country.

The scientific novelty of the research is reflected in the provisions submitted to the defense and in theoretical generalizations and proposals formulated in the conclusion.

The work is relevant both from theoretical and practical point of view and may prove useful in deepening and broadening theoretical knowledge on the legal institution of leasing, in further legal researches, as well as in improving legislative regulation and law enforcement practice, which would ultimately contribute to the further development of leasing activities in our country.

